ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայկական երկրորդ հեռուստաալիքի» եթերում 2023 թվականի մայիսի 23-ի «Լրաբեր» լրատվական հաղորդման 13:00-ի թողարկման ընթացքում հնչած առանձին արտահայտությունների վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Լևոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

Դիմող՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը 2023թ. մայիսի 30-ին ստացել է ՀՌՀ նախագահ Տիգրան Հակոբյանի նամակը «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի 2023թ. մայիսի 23-ի «Լրաբեր» լրատվական հաղորդման 13:00-ի թողարկման ընթացքում հաղորդավարի, նյութի հեղինակի և Արմեն Աշոտյանի հնչեցրած առանձին արտահայտությունների վերաբերյալ, նաև հաղորդման՝ խնդրո առարկա հատվածների սղագրությունը: ՀՌՀ-ն շեշտում է, որ ժարգոնային արտահայտություններից զատ Արմեն Աշոտյանը նյութի ընթացքում երեք անգամ ցույց է տվել այսպես կոչված՝ «երեք մատի կոմբինացիա»:

2. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը 2023թ. ապրիլի 17-ին ընդունել էր պարզաբանում՝ Հ2-ի եթերում բազմաթիվ և կրկնվող խախտումների առնչությամբ, սակայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ակնկալել է սույն բողոքի քննություն:

3. «Լրաբեր» լրատվական հաղորդման 13:03:05 րոպեին Արմեն Աշոտյանի ֆեյսբուքյան լայվից հատված ներկայացնելուց առաջ լրագրող Հրաձին Սաֆարյանը մեջբերում է Աշոտյանի խոսքը, այնուհետև ցուցադրվում է Աշոտյանի ֆեյսբուքյան լայվից մի մաս, այնուհետև հեռարձակում է Աշոտյանի խոսքի որոշ հատվածներ: (ԴՄ-ն որոշեց Արմեն Աշոտյանի հնչեցրած խոսքերն ու արտահայտությունները չվերարտադրել, չտարածել:)

4. Խնդիրը պարզաբանելու նպատակով 2023թ. մայիսի 31-ին Դիտորդ մարմինն էլեկտրոնային նամակով դիմել է Հ2-ին:

5. 2023 թ. հունիսի 1-ին Դիտորդ մարմինը ստացել Հ2-ի պատասխանը, որում, մասնավորապես, ասված է. *«Մեկ քաղաքական գործչի՝ մեկ այլ քաղաքական գործչին ուղղած քննադատությունը, թեև կոշտ, լիովին համապատասխանում է խոսքի ազատության հիմնարար սկզբունքի ոգուն և տառին: Դիտորդ մարմինը նմանատիպ բողոքներ քննելիս, մեր խորին համոզմամբ, չպետք է դիտարկի քննադատությունը համատեքստից կտրված: Հիշեցնում ենք Դիտորդ մարմնին, որ այս ամենը տեղի է ունենում մի երկրում, որտեղ ԱԺ նախագահը թքում է քաղաքացու երեսին, մի երկրում, որտեղ բարձրագույն պետական պաշտոն զբաղեցնող անձինք իրենց թե՛ հանրային խոսքում և թե՛ գործողություններում իրար հերթ չտալով անտեսում են Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը և ՀՀ անկախության հռչակագիրը»:*

6. 2022թ. հոկտեմբեր-դեկտեմբերին կայացած մի քանի նիստերում ԴՄ-ն անդրադարձել է «Հայկական երկրորդ հեռուստաալիքի» վերաբերյալ ՀՌՀ դիմումը քննարկելու նպատակահարմարության խնդրին: Քննարկումների ժամանակ հաշվի են առնվել հետևյալ հանգամանքները. ա) Մինչև սույն դիմումը՝ Դիտորդ մարմինը ՀՌՀ-ից 2021- 2022թթ. ստացել է Հ2 հեռուստաալիքին վերաբերող 5 դիմում և կայացրել է 4 եզրակացություն, որոնք ունեցել են նմանատիպ բնույթ և հասցեագրվել են մեծ մասամբ «Հայելի ակումբի» մամուլի ասուլիսների լուսաբանմանը: բ) 2022թ. ընթացքում ԴՄ և Հ2-ի ղեկավարության միջև տեղի է ունեցել ինտենսիվ հաղորդակցություն՝ նամակների փոխանակմամբ և ԴՄ քննարկումներին հեռուստաալիքի փոխտնօրենի մասնակցությամբ, որոնցում ի հայտ են եկել էական հակասություններ ինքնակարգավորման մարմնի և լրատվամիջոցի ներկայացուցիչների միջև՝ ԶԼՄ-ների էթիկայի կանոնագրի մեկնաբանման և ԴՄ գործունեության վերաբերյալ: գ) Հ2-ի դեմ նախորդ բողոքների վերաբերյալ կայացված եզրակացությունները որևէ ազդեցություն չեն ունեցել հեռուստաալիքի խմբագրական քաղաքականության վրա:

7. ՀՌՀ-ն պարբերաբար դիմում է Դիտորդ մարմնին՝ Հ2-ի քաղաքական բնույթի հեռարձակումներում տեղ գտած լրագրողական կամ մեջբերվող գռեհկաբանությունը, վուլգարիզմը, ժարգոնային ձևակերպումները, ատելության խոսքի դրսևորումները քննության առնելու առաջարկով:

8. Դիտորդ մարմինը պարբերաբար շեշտում է, որ հայհոյախոսության և քրեական ենթամշակույթին բնորոշ ֆրազների ու ժեստերի հեռարձակումը հարիր չէ ԶԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցին և հակասում է լրագրողական որակյալ աշխատանքի սկզբունքներին:

9. Հ2-ը պարբերաբար հայտարարում է, որ իրենց խմբագրության պատկերացմամբ՝ դա իրենց խոսքի ազատության դրսևորումն է՝ *«հայության համար բախտորոշ այս ժամանակաշրջանում»:*

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

ՀՀ լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր

1.3. Պատասխանատու մոտեցում ցուցաբերել սոցցանցային կամ նոր մեդիա հարթակների տեղեկությունները տարածելիս, անպայման նշել դրանց ստուգված, վստահելի կամ հետագա ստուգման ենթակա լինելը:

3.5.6. Մոդերացնել լրատվամիջոցի սոցցանցային էջերի մեկնաբանությունների հրապարակումը՝ հնարավորինս հեռացնելով ատելության խոսք, բռնություն և օրենքով արգելված այլ գործողություններ քարոզող, ակնհայտ վիրավորանք պարունակող գրառումները:

4.2. Երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, և պատասխանատվություն է կրում իր վճռի համար:

5.2. Որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը:

6.4. Քաջալերել հանրությանը՝ արտահայտել ԶԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության:

Գ. ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

- Քաղաքական կամ կուսակցական գործիչը կարող է իր սոցցանցային էջում արտահայտվել հահոյանքներով ու քրեական աշխարհին բնորոշ պատկերավոր արտահայտություններով, սակայն հեռուստաալիքը՝ նրա հայտարարությունների թեմայով լրատվական նյութ պատրաստելիս պետք է իր եթերը զերծ պահի ցածրակարգ խոսքից: Խմբագրությունը պետք է շահագրգռված լինի իր եթերում չգեներացնել փողոցային բառապաշարը, քրեական քրեական կամ կիսաքրեական հարաբերություններում ընդունված լեզուն չներկայացնել որպես քաղաքական պայքարի ու հայրենասիրության դրսևորում: Տվյալ դեպքում ՀՀ-ը գործել է Կանոնանգրի 3.5 կետի ոգուն հակառակ: Այն որ նման բովանդակությունը ստեղծվում է ի պատասխան քաղաքական օպոնենտների գործողությունների կամ խոսքի, չի կարող արդարացնել էթիկայի կանոնների կոպիտ և հաճախակի խախտումները:
- ԶԼՄ-ների բարեխիղճ և պատասխանատու աշխատանքը դիտարկելով որպես ինքնակարգավորման կարևոր տարր, նաև հաշվի առնելով, որ ՀՀ-ը հայհոյախոսությունը նույնացնում է

խոսքի ազատության հետ կամ այն իրոք համարում է խոսքի յուրահատուկ ազատություն՝ *«հայ ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջանում»*, Դիտորդ մարմինը Հ2-ին հորդորում է վերանայել իր խմբագրական քաղաքականությունը: Մանավանդ որ սուր քաղաքական խոսքի բուն էությունը հնարավոր է փոխանցել առանց բողոքի առարկա դարձած արտահայտությունների: Դրանով կապահովվեն և՛ խոսքի ազատությունը, և՛ լրագրողական էթիկայի սկզբունքները: Այս մոտեցման արհամարհումը առաջացնում է Կանոնագրի 5.2 կետի խախտման նախադեպ:

- Դիտորդ մարմինն արձանագրում է, որ Հ2-ը կողմնակալ է եղել խնդրո առարկա տեսանյութում հնչած քաղաքական բնույթի ձևակերպումները հեռարձակելիս և այլ կարծիք չի ներկայացրել, քանի որ Հ2-ի խմբագրական տեսակետն ակնհայտորեն համընկնում է տվյալ գործչի քաղաքական տեսակետի հետ: Այս հանգամանքը հակասում է Կանոնագրի 6.1. կետին, որը սահմանում է. *«Աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից»*:
- Դիտորդ մարմինն արձանագրում է, որ Հ2-ը խախտել է Կանոնագրի 6.3. կետը, որը սահմանում է. *«Ընդունել սեփական սխալները և պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք»*:

Ծանուցում.

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հիշեցնում է, որ Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչները պատրաստակամություն են հայտնել Դիտորդ մարմնի եզրակացության՝ խախտմանը վերաբերող հատվածներն առանց մեկնաբանությունների հրապարակել և այդ մասին տեղեկացնել ԴՄ-ին՝ կցելով հրապարակման հղումը:

Ընդունվել է 2023 թ. հունիսի 25-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ»

հեռուստաընկերության խմբագիր, պրոդյուսեր
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ, ռեժիսոր, Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի պրոֆեսոր
Արա ՇԻՐԻՆՅԱՆ, Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի Մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
Լևոն ԲԱՐՍԵՂՅԱՆ, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի հիմնադիր և ղեկավար

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորել են ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 74-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2023 թվականի հունիսի 25-ի ընդհանուր ժողովում: